

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԼԵՋՈՒԱԿԱՆ ՆՈՐՄԸ
ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԽՕՍՈՒԱԾՔԸ****Մուտք**

Գրական լեզուն ձեւաւորուում է ընդհանուր խօսակցական լեզուի հիմքի վրայ: Գրական լեզուի գրաւոր եւ բանաւոր խօսակցական տարբերակներում ընդհանրական դարձած եւ գործող լեզուական կանոնների շրջանակներում մշակուած օրինաչափութիւնները որոշակի ժամանակահատուածում ամրապնդուում են լեզուական համակարգում, դառնում լեզուական նորմ կամ կանոն¹:

Լեզուական նորմը լեզուական միջոցների գործածութեան համընդունուած կանոններն են, որոնք արձանագրուում են տուեալ լեզուով խօսող հանրութեան ընկալումը լեզուական այս կամ այն երեւոյթի «ճիշդ» կամ «սխալ» լինելու վերաբերեալ:

Լեզուի նորմաւորումը հասարակական եւ հոգեբանական պահանջ է: Դրա հիմնական նպատակը փոխադարձ ընկալման հասնելն է, իրար հասկանալի լինելը, հաղորդակցուելը²: Սակայն արեւմտահայերէնը լինելով իր բնօրրանից զրկուած եւ աշխարհով մէկ սփռուած հայութեան տարբեր զանգուածների ընդհանուր լեզուն՝ զրկուած է միասնական գործածութեան ու զարգացման, կանոնարկման հնարաւորութիւններից, ենթակայ է այլ լեզուների տարաբնոյթ ազդեցութիւնների եւ ստիպուած է դիմակայել բազում մարտահրաւէրների, միաժամանակ նոր սերնդի շարքերում հայախօսների թուի շարունակական նուազումը վտանգ է ներկայացնում ոչ միայն լեզուապահպանական, այլ նաեւ հայապահպանական առումներով:

Արեւմտահայ գրական լեզուի զարգացումը նախապէս կրել է տարերային բընոյթ, վաղ շրջանում յատկանշուել է գրաբարեան, միջին հայերէնի, բարբառային եւ օտարամուտ անհարկի տարրերով ու ձեւերով, որոնք հետզհետէ դուրս են մղուել գործածութիւնից եւ փոխարինուել գրական համարժէքներով: Արեւմտահայ գրական լեզուն 19-րդ դարի առաջին տասնամեակներից սկսած ընդարձակելով իր ոլորտները, դարձել է հրապարակագրութեան, թատերագրութեան, գիտական, գեղարուեստական գրականութեան լեզու:

Արեւմտահայ իրականութեան մէջ, յատկապէս 19-րդ դարի 40-ական թուականներին ծաւալուած գրապայքարը մի կողմից, բուրժուական յարաբերութիւնների զարգացումը եւ հայ ժողովրդի իբրեւ ազգի ձեւաւորման պրոցեսը միւս կողմից, ապահովեցին արեւմտահայ գրական լեզուի վերջնական յաղթանակը եւ բարենպաստ պայմաններ ստեղծեցին նրա յետագայ առաջընթացի համար:

Բանաւոր լեզուի բառապաշարը գնալով հարստացուեց գրական երկերում՝ ի հաշիւ գրաբար եւ գրաբարեան արմատներով բարդուած նոր բառերի, գործածութիւնից դուրս մղուեցին նեղբարբառային բառերն ու բառաձեւերը, զգալիօրէն կրճատուեցին

¹ Իւրա Աւետիսեան, Տեղաշարժեր արդի գրական հայերէնում, Երեւան, 2011, էջ 3:

² Իւրա Աւետիսեան, Լեզուական նորմ, նորմաւորման շափանիշները, Բանբեր Երեւանի Համալսարանի, Հայագիտութիւն, 2014, № 2, էջ 3:

գրաբարի, միջին հայերէնի եւ բարբառների դրոշմը կրող քերականական բազմաձեւութիւնները: Բոլորն զարգացում ապրեց արեւմտահայ գեղարուեստական գրականութեան լեզուն եւ ժամանակի գրողների (Մ. Պէշիկթաշլեան, Յակոբ Պարոնեան, Պետրոս Դուրեան, Դանիէլ Վարուժան, Միսաք Մեծարենց, Գրիգոր Զօհրապ, Սիամանթօ, Երուանդ Օտեան, Արփիար Արփիարեան, Վահան Թէքէյեան եւ ուրիշներ) լեզուաշինարարական աշխատանքի շնորհիւ աւելի ու աւելի մշակուեց, կատարելագործուեց ու դարձաւ հարուստ գրական լեզու³:

Դեռ 15-րդ դարում Պոլիսը հայկական մեծ գաղթօճախ էր: Մինչեւ թուրքերի մուտքը հայերն այստեղ ունէին դպրոց, եկեղեցի եւ եպիսկոպոս: Բիւզանդիայի անկումից յետոյ 1453 թ.-ին, Ֆաթիհ Սուլթան Մեհմետի վարած յատուկ քաղաքականութեամբ Պոլիսը, որ վերանուանուեց Ստամպուլ, շատ արագ վերածուեց հայ արհեստաւորների գաղթօճախի: Սկսեցին ձեւաւորուել հայոց ազնուականութեան յատուկ դասեր՝ մահատեսիներ, շէլէպիներ, խօջաներ եւ այլն: 17-18-րդ դարերում Պոլիսը հայերի համար դարձաւ մշակութային-հասարակական կենդրոն: 19-րդ դարի սկզբներին, տարբեր գաւառներից գաղթած հայերի հաշուին, պոլսահայերի թիւը հասաւ 250 հազարի, որոնց հազորդակցման համար աստիճանաբար ձեւաւորուեց մի ընդհանուր խօսակցական լեզու՝ պոլսահայերէնը: Գաւառների ժողովուրդը, շարունակ Պոլիս պանդխտելով, սովորում էր Պոլսի բարբառը: Այդ լեզուի կրողները, հեռանալով Պոլսից, իրենց հետ տանում էին արդէն բաւականաչափ մշակուած մի լեզու՝ միջնաշխարհի հայերէնը (Պոլսի խօսակցական լեզուն): «Պոլսի բարբառը պիտի յաղթանակեր առանց որեւէ պատճառաբանութեան, լոկ տեղի եւ հանգամանքների բերմամբ: ...Պոլսի բարբառի դիրքը՝ իբրեւ հիմք գրական լեզուի քերականութեան՝ վճռուած էր»⁴:

Պոլսահայ բարբառը իր բնոյթով աւելի մօտ է հին գրական հայերէնի ոգուն ու կանոնին: Հ. Աճառեանի պնդմամբ. «Պոլսի խօսակցական հայերէնը, նոյնիսկ որոշ իմաստով աւելի «մաքուր» է Երեւանի բարբառից. Արարատեան անախորժ ա-ի դիմաց պոլսահայերէնը ունի եւ օժանդակ բայի ներկայ ժամանակի եզակի երրորդ դէմքի է ձեւը, որ եւ յատուկ է հին եւ միջին գրական հայերէններին, ինչպէս աղուոր է, ասանկ է»:

18-րդ դարում թէեւ տպագրում էին աշխարհաբար կամ աշխարհաբարին մօտ լեզուով գրքեր, սակայն առաջնութիւնը պատկանում էր գրաբարին: Միայն Յովհաննէս Կոլոտի պատրիարքութեան տարիներին (1715-1741) Պոլսում հրատարակուել են մի քանի տասնեակ գրքեր⁵:

Արեւմտահայ գրականը հարազատ մնալով իր բարբառային հիմքին, քանի որ գրականն ու խօսակցականը անհամեմատ մօտ էին իրար, գրական լեզւում պահպանեց պոլսահայ բարբառային-խօսակցականում առկայ բազմաթիւ բառեր (**ասիկա, ատիկա, անիկա, ակռայ, աղէկ, աղուոր, խածնել, լմննալ, խպնիլ, կռնակ, հոս, հող**), քերականական կազմութիւններ (**գրեր է, իմ գիրքս, մերինները, տուներնիս, տղաք, մարդեր**) եւ այլն⁶:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից եւ հայկական հարցը եւրոպական դիւանագիտութիւն մտցնելուց յետոյ թուրքական կառավարութիւնը որոշեց այդ հարցը լուծել Արեւմտեան Հայաստանը հայաթափ անելով: 19-րդ դարի վերջին թուրքերի հա-

³ Իւրա Անտիսեան, Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի զուգադրական փոփոխութիւն, Երեւան, 2007, էջ 4-6:

⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 9-10:

⁵ Նոյն տեղում, էջ 5:

⁶ Նոյն տեղում, էջ 11:

մար պարզ էր, որ երկրին վերջանականապես տէր դառնալու համար իրենք պէտք է ստեղծէին Հայաստան՝ առանց հայերի: 1895-1896 թթ. համիդեան կոտորածներին, 1909 թ.-ին Ադանայի ջարդերի ժամանակ սկսուեցին տեղահանութիւններ, որոնք արհաւիրքային մեծ չափերի հասան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Օգտուելով պատերազմի խառնաշփոթից եւ ունենալով դաշնակից Գերմանիայի աջակցութիւնը՝ երիթուրքական կառավարութիւնը 1915 թ.-ի գարնանից, պատրուակ դարձնելով այն, որ հայերը համակիր ու աջակից են իրենց հակառակորդ Ռուսաստանին, սկսեց տեղահանութիւն դէպի հարաւ եւ կոտորածներ: 1915-16 թթ. Մեծ Եղեռնի ժամանակ բռնութեամբ միայն վեց հարիւր հազար հայ գաղթուեց Միջագետք, որոնց մեծ մասը ճանապարհին զոհ դարձաւ թուրքերի անօրինութիւններին: Բնաջնջուեց աւելի քան 1,5 միլիոն հայ, ողջ մնացածները փախչում էին՝ իրենց փրկութեան օթեւան դարձնելով Սիրիան, Լիբանանն ու Պաղեստինը, ինչպէս նաեւ հեռուոր Ամերիկան, Եւրոպան ու Ռուսաստանը⁷:

Մեծ Եղեռնից յետոյ Պաղեստինում ապաստան գտան աւելի քան տաս հազար հայ: Նրանց մի մասին առաջին անգամ թոյլ տրուեց մշտական բնակութիւն հաստատել հայկական կենտրոն Սբ. Յակոբեանց մայրավանքի պարիսպներից ներս՝ Հայոց Պատըր-խարքարանի պաշտպանութեան ներքոյ:

Թէեւ եկուորները տարբեր լեզուական մշակոյթների կրողներ էին, սակայն շուրջ երկու տասնամեակ անց գրական լեզուն բոլոր շերտերի համար դարձաւ հասարակական, ընդհանուր լեզու:

Այսօր վստահաբար կարող ենք փաստել, որ այլ լեզուների ազդեցութիւնը իր հետքն է թողել ոչ միայն բուն լեզուական կարգերում (բառապաշար, հոլովման ու խոնարհման համակարգեր, շարահիւսութիւն), այլեւ արեւմտահայերէնի լեզուամտածողութեան վրայ:

Սոյն ուսումնասիրութիւնը սկսել ենք 2015 թ.-ից, եւ ներկայ հրապարակմամբ փորձել ենք ներկայացնել Երուսաղէմի համայնքի արեւմտահայերէնի առկայ առանձնա-յատկութիւնները, գաղութի խօսուածքը եւ դրանում առկայ օտար բառերի գործածութիւնը: Աշխատանքը կատարելիս գաղութաբնակ տարբեր խաւերի մարդկանց շրջանում կատարել ենք բազմաթիւ հարցումներ՝ հետազօտութիւնն առաւել ճշգրիտ եւ ընդգրկուն դարձնելու համար:

Հայաստանն ու հայերը Պաղեստինի հետ կապեր են ունեցել վաղնջական ժամանակներից, յատկապէս Հայոց Արքայից Արքայ Տիգրան Մեծի օրօք⁸: Իսկ քրիստոնէ-ութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելուց յետոյ, սկսուեց հայերի նկատելի հոսքը Պաղեստին: 4-րդ դարում բաւականին թուով հայ վանականներ հաստատուեցին Յուդայի անապատում, որոնցից նշանաւորը Սուրբ Եւթիմիոս Մեծն էր⁹: Նոյն դարում սկսեց կազմաւորուել Հայոց վանքն ու թաղամասը, ապա 7-րդ դարում՝ 638 թ.-ին, հայերը Երուսաղէմում հիմնադրեցին իրենց առաձին պատրիարքութիւնը¹⁰: Ըստ յիշատակագիր Անաստաս Վարդապետի, 7-րդ դարում արդէն եօթանասունից աւելի հայկական եկեղեցիներ ու վանքեր գոյութիւն ունէին Երուսաղէմում եւ շրջակայ տարածքներում, որոնք կառուցուել էին Հայոց Տրդատ թագաւորի հրամանով եւ արքունի ծախսերով, ապա

⁷ Արեւմտահայերէնի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում, Երեւան, 2012, էջ 12:

⁸ Տէս Յ. Կաթ. *Դրաստանակերտցի*, Հայոց Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թօսունեանի, Երեւան, 1996, էջ 33:

⁹ Տէս Մ. Եսպ. *Աղանունի*, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 331:

¹⁰ Տէս Կ. Վրդ. *Բաղդասարեան*, Երուսաղէմի Հայկական թաղամասի գաղտնիքները, Մաս Ա., Երեւան, 2019, էջ 7:

Մամիկոնեանների եւ այլ նախարարական տոհմերի միջոցներով¹¹: Այդ եկեղեցիներից ու վանքերից յատկապէս Սրբոց Յակոբեանց վանքի¹² շուրջ վանականներից բացի կամաց-կամաց սկսեցին բնակութիւն հաստատել նաեւ ուխտաւորներ, առեւտրականներ, արհեստաւորներ եւ այդպէս սկսեց կազմաւորուել աշխարհիկ կեանքը: Ըստ պատմիչների վկայութեան այդ շրջանում աշխարհիկ բնակչութեան թիւը շուրջ հազար ընտանիք էր:

7-11-րդ դարերում Երուսաղէմի վրայ իշխող արաբ եւ իսլամադաւան այլ իշխանաւորներ ճանաչել են հայ համայնքի ինքնուրոյնութիւնը ու նրա իրաւունքները որոշ քրիստոնէական սրբավայրերի նկատմամբ: 11-րդ դարում Երուսաղէմի հայկական թաղամասը, որը հին քաղաքի չորս թաղամասերից մէկն է, արդէն իսկ զբաղեցրել է իր ներկայիս (շուրջ 150 000 քառ. մ.) տարածքը: Սակայն Կիլիկեան հայոց թագաւորների օրօք հայերն աւելի են ամրացել Երուսաղէմում: Քաղաքի հայ բնակչութիւնը յատկապէս աւելացել է 11-րդ դարի վերջին եւ 12-րդ դարի սկզբին, խաչակիրների Երուսաղէմ գալով, որոնց բանակում եղել են հայեր Կիլիկիայից եւ Սիրիայից:

Հայերի թիւը Երուսաղէմում նուազել է Օսմանեան տիրապետութեան հաստատումից (1517) յետոյ: Պատմիչ Սիմէոն Լեհացին վկայում է, որ 1615 թ. Երուսաղէմում եղել է 12 հայ ընտանիք¹³: 19-րդ դարում հայ համայնքը սկսել է ստուարանալ: 1800 թ. Երուսաղէմում բնակուել է 500, 1850 թ.՝ 550, իսկ 1870 թ.՝ 640 հայ: Պաղեստինի հայ համայնքը դարձեալ համալրուել է 1894-1896 թթ. եւ 1909 թ. Օսմանեան Թուրքիայում հայկական ջարդերից փրկուած հայերով: 1910 թ. Երուսաղէմում ապրել է շուրջ 1300 հայ: Մեծ Եղեռնից եւ 1918 թ. երկրամասը մանդատի տակ անցնելուց յետոյ Երուսաղէմում ապաստան են գտել աւելի քան 10 000 հայ: 1920 թ. Պաղեստինի տարածքում հայերի թիւն արդէն հասել է մօտ 20 000-ի: 1922 թ. Հայկական բարեգործական ընդհանուր միութեան հովանաւորութեամբ Երուսաղէմ են բերուել 1000 հայ որբեր, որոնց մէջ էին ապագայի լուսարարապետներ, առաջնորդներ եւ պատրիարքներ¹⁴:

Ինչպէս տեսանք, Հայ Երուսաղէմի պատմութիւնը տարբերում է այլ գաղութների պատմութիւններից: Այն նորաստեղծ գաղութ չէ, այլ կազմաւորուել եւ հաստատուել է Մեծ Եղեռնից շատ առաջ: Ճիշդ է Մեծ Եղեռնից յետոյ, երբ ստեղծուեց Սփիւռքը, գաղթականներ եւ որբեր հասան նաեւ Երուսաղէմ, սակայն յանձինս քաղաքացիների Երուսաղէմն արդէն ունէր հաստատուած ու կայացած գաղութ: Մեծ Եղեռնից փրկուած հայերը, երբ հանդիպում էին միմեանց, բարեւելուց յետոյ, անպայման, հարցնում էին, թէ զրուցակցի նախնիները ո՞րտեղից են, իսկ Սաղիմահայերը, երբ Երուսաղէմից գուրս հանդիպում էին այլ Սաղիմահայի, հարցնում էին՝ քաղաքացու, թէ ոչ քաղաքացու զաւակ է զրուցակիցը: Եղեռնից փրկուածը Սաղիմահայի համար գաղթական էր, իսկ Եղեռնից առաջ Երուսաղէմում ապրողը՝ քաղաքացի: Պատմութիւնն, ասես, կրկնում է. այսօր էլ զրուցակցին հարցնում են, Հայաստանցի՞ եմ, Լիբանանցի՞, թէ՞ Պոլսեցի:

¹¹ Այս մասին տե՛ս Անաստաս Վրդ. Յերասպետի, Վասն վանօրէից, որ ի սուրբ Բաղաբն յերուսաղէմ, Առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Զօպանեանի, «Մատենագիր հայոց», հ. ե., է. դար, Ամբիփաս, 2005, էջ 1271-1279: Տե՛ս նաեւ Պ. Զօպանեան, Անաստաս Վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի ժամանակի հարցի շուրջ, Պատմա-բանասիրական համալսում, 2001, № 1, էջ 27-46:

¹² Ըստ Միքայիլ Նպս. Աղաւնունու, Սրբոց Յակոբեանց վանքի սրբավայրերը միաժամանակ չեն կառուցուել: Ամենահին սրբավայրերը՝ Սբ. Գլխադիր եւ Սբ. Մինաս մատուռները, գոյութիւն ունեն 7-րդ դարից ի վեր: Իսկ Սրբոց Յակոբեանց վանքն ու եկեղեցին խաչակիրներից շատ առաջ արդէն կառուցուած էր (Տե՛ս Մ. Նպս. Աղաւնունու, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 251):

¹³ Սիմէոն Գպիր Լեհացոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարան: Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Վիեննա, 1936, էջ 260:

¹⁴ Տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/Հայերը_Բուրայելում, 10.03.2018 թ.:

Քաղաքացիները գաղթականների հանդէպ ունէին ընդգծուած վերաբերմունք, նոյնիսկ իրենց աղջիկներին կնութեան չէին տալիս գաղթականների զաւակներին, **չնմի տար** = չեմ տար,- ասում էին: Պատճառներից մէկը, թերեւս այն էր, որ չէին ցանկանում, որ գաղութում «օտար» ամուսնութիւններ լինէին. **«հայ ես, բայց օտար ես»**, - ասում էին գաղթականին եւ իրենց աղջկան ամուսնացնում էին մօտաւոր ազգակցականի զաւակի հետ, սակայն, ինչպէս գիտենք, Հայ եկեղեցին արգելում է մօտաւոր ազգականների ամուսնութիւնը:

Քաղաքացիները մինչեւ այսօր ունեն իրենց եկեղեցին՝ Սբ. Հրեշտակապետացը: Թէեւ նրանցից շատերը հայերէն չգիտէին եւ խօսում էին բացառապէս արաբերէնով, այնուամենայնիւ ամէն Կիրակի պարտադիր մասնակցում էին սուրբ պատարագին: Իրենց հետ տանում էին նաեւ թարգմանիչ, որին արաբերէնով ասում էին **«տուրժուման»**, որպէսզի թարգմանէր պատարագի լի քարոզը, քանի որ հոգեւորականներից շատերն էլ արաբերէն չէին խօսում: Պատարագի երգեցողութեան երգչախմբի բաժինը կատարում էին քաղաքացի տղամարդիկ. անգիր երգում էին Նկմալեան սուրբ պատարագը՝ իրենց բնորոշ առողանութեամբ: Մինչեւ այսօր Սբ. Ծննդեան տօնի սուրբ պատարագի երգեցողութիւնը Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի մէջ, դարձեալ կատարում են քաղաքացիները, քանի որ այդ պատարագը մատուցում է նրանց համար, Զորօրհնէքի խաչքաւորը եւս քաղաքացի է լինում: Պատարագը մատուցում է Սբ. Հրեշտակապետաց եկեղեցու տեսուչը, որը համարում էր եւ է քաղաքացիների «վարդապետը»՝ հովիւը, եւ, երբ որեւէ հարց կամ խնդիր էին ունենում՝ անմիջապէս դիմում էին նրան:

«Քաղաքացի» եզրոյթի վերաբերեալ հետաքրքիր յիշատակութիւն կայ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցու զանգակատան պատին, որտեղ ասում է, որ կառուցուել է 1872 թ.-ին՝ քաղաքացի ժողովուրդի ծախսերով¹⁵:

Քանի որ հայերը մինչեւ այսօր շփում են արաբների հետ եւ տեղի խօսակցական լեզուներից մէկն էլ արաբերէնն է, հետեւաբար այն զգալի ազդեցութիւն է ունեցել գաղութի խօսակցական լեզուի վրայ: Այդ է պատճառը, որ քաղաքացիները խօսում էին արաբական առողանութեամբ, նոյնիսկ հայերէնը արաբերէնից թարգմանելով, ինչպէս օրինակ. **«Զարդն քեզի խիար ուտն»**: Շատ յաճախ մէկ նախադասութեան մէջ միաժամանակ օգտագործում էին հայերէն, թուրքերէն եւ արաբերէն բառեր. **«Գիմա՛ իլ ջամաքան, ջիբ իլ բաժակներ** = Գնա՛, պահարանից բաժակները բեր» կամ **«Գիմա՛ աշխանա՛, ջիբ իլ շիշխանէ իլ բրիռէ** = Գնա՛ խոհանոց, մեծ կաթսան բեր»:

Հետաքրքիր եւ գեղեցիկ սովորութիւն էր զաւակներին սրբերի անունով կոչելը: Գրեթէ ամէն ընտանիքում պէտք է լինէին **Յակոբ, Գէորգ, Օհաննէս, Կարապետ**, անուններով տղաներ: Երբեմն նոյն ընտանիքի երկու եղբայրներ իրենց զաւակներին անուանում էին Յովհաննէս, եւ, որպէսզի արաբները կամ Սաղիմահայերը իրարից տարբերէին, կամ մեծ ու փոքր էին ասում, կամ ազգանունով էին կանչում, կամ էլ հօր արհեստով. **Հաննա զղիր** = Փոքր Յովհաննէս, **Հաննա Նաջար** = Ատաղձագործ Յովհաննէս: Իսկ Կիլիկիայից եկած քաղաքացիներն իրենց զաւակներին կոչում էին Կիլիկեան թագաւոր-թագուհիների, իշխան-իշխանուհիների անուններով: Մինչեւ այսօր հանդիպում են՝ **Աբգար, Օշին, Զապէլ, Զաքար, Լևոն** անունունները: Զափազանց հիւրասէր էին: Սբ. Ծնունդին եւ Սբ. Զատիկին սեղան էին բացում, հիւրասիրութիւն էին կազմակերպում եւ ուրախ առիթներով իրար գլխի հաւաքուելիս՝ գրեթէ միշտ նոյն երգերն էին երգում. **«Երգ խնճոյքի կամ Սեղանն է առատ»**, **«Կենաց երգ կամ Լարի թըմբըլը»**, **«Հինկալա կամ Հովիւր սարում տխրեց»**, **«Հէյ կարաւան»** եւ այլն:

¹⁵ Շինեցաւ զգանգակատունս արդեամբ քաղաքացի ժողովրդեան ի պատրիարքութեան Տ. Տ. Նսայեայ Ս. Արքեպիսկոպոսի եւ ի տեսչութեան Եղեայ վարդապետիս ի վանեցոյ. 1872 թ.:

Երուսաղէմի հայութեան խօսուածքին անդրադառնալով, պէտք է արձանագրենք, որ այն էապէս չի տարբերուում լիբանանեանից ու սիրիականից, քանի որ նրանց կրթական համակարգերը գրեթէ նոյնական են (դասագրքերը բերում են լիբանանից, մամուլի լեզուն, համայնքային տարբեր ակումբների ու միջոցառումների լեզուն եւ այլն)։ Սակայն, հայերը Երուսաղէմում կարողացել են պահպանել իրենց ինքնութիւնը՝ լեզուն, գիրը, գրականութիւնը, շնորհիւ Հայոց Պատրիարքարանի, Ժառանգաւորաց ու Թարգմանչաց վարժարանների, Մատենադարանի եւ Զեռագրատան։

Դեռեւս Հր. Աճառեանը նկատել է հայերէնում օգտագործուող արաբերէն բառերի մի շարք։ Դրանց թւում **դալատ** բառը, որ նշանակում է սխալ, **խահուէ**, որ նշանակում է սուրճ, **մասխարա**, որ նշանակում է ծաղր, ծաղրի առարկայ, **հավա** = օդ։

Արաբերէնից փոխառութիւններ դեռեւս զգալի էին Մխիթար Հերացու 1184 թ. գրուած «Ջերմանց մխիթարութիւն» գրքում։ Առանձնապէս շատ էին արաբերէն բառերը դեղատոմսերում։

Բնականաբար խօսակցական լեզւում կային շատ փոխառութիւններ ինչպէս ուղղակիօրէն թուրքերէնից, արաբերէնից, եբրայերէնից, այնպէս էլ միջնորդաբար այլ լեզուներից անցած։

Ստորեւ բերուած ցանկը շատ տարածուած է Երուսաղէմի հայութեան առօրեայ խօսակցական լեզւում.

Ամմօ – հօրեղբայր, **բիժամա** – գիշերազգեստ, **եահո՛** – օ՛ֆ, ա՛յ մարդ, **զէվզէկ** – շատախօս, դատարկախօս, **թանթիկ** – հօրաքոյր, մօրաքոյր, **թրէն** – շոգեկառք, **իշտահ** – ախորժակ, **իշտէ** – ահա, ահաւասիկ, այսինքն, **լահանայ** – կաղամբ, **հէչ** – բնաւ, **մահանայ** – պատրուակ, **նէ** – եթէ (**ուզէ նէ** – եթէ ուզի), **նէնէ** – մեծ մայրիկ, **նօթ ընել**, **նօթի առնել** – նշում կատարել, **ուլան** – ծօ, **չաքէթ** – բաճկոն, **չոճուխ** – երեխայ, **պազար** – շուկայ, **պէ** – էհ, **պէլքի** – թերեւս, գուցէ, **պէպէք** – գրկի երեխայ, **պիլէ** – նոյնիսկ, անգամ, **պիրա** – գարեջուր, **սալաթ(ա)** – աղցան, **վալիզ** – ճամպրուկ, **տահա** – տակաւին, **տայտայ** – քեռի, **տէտէ** – մեծ հայրիկ, **փիլալ** – փլաւ, **փիս** – գէշ, վատ, աղտոտ, **քէփէզէ** – խայտառակ, **քրաւաթ** – փողկապ, **օթօ** – ինքնաշարժ, **զանճապիլ** – կոճապղպեղ, **պայդուշ** – բու, **նաֆաս** – շունչ, **մալեշ** – ոչինչ, **եա՛անի** – այսինքն, **վալլահ/բիլլահ** – Աստուած վկայ, **խալաս** – վերջ, **հախ** – վարձ, արժանիք, **հայդէ** – գնա՛ կորիր, դե՛հ, հեռացի՛ր, **չախմախ** – հրահան, կրակահան, **չամ** – նօճի ծառ (այստեղից՝ Չամ թաղ), **չանա** – (խօսքի բռնուելու իմաստով), **չինգանա** – բօշաների մի ցեղ, **չօրբա** – ապուր, **դազուխ** – ցից, **թաբաղ** – ափսէ, **թամամ** – ճիշտ, իսկապէս, **հաք** – դեղահատ, **եահուդի** – հրէայ, **փաչա** – խաշ, **քեսստանա** – շագանակ, **քեսրխանա** – գործարան, անառականոց, **քէֆ** – հաճոյք, խնճոյք, **օրթաղ** – ընկեր, **թէքնիք** – տեխնիկա, **պօշ** – փուշ, դատարկ, **փոլիս** – ոստիկան, **ախմախ** – յիմար, **դուքան** – խանութ, **զայթուն** – ձիթապտուղ, **խէր** – բարիք, **պատինճան** – սմբուկ, **սախաթ** – խեղանդամ, յաշմանդամ, **ֆինջան** – սուրճի գաւաթ, **ֆըլան** – այսինչ, **ֆըստըղ** – պիստակ, **թիւրշի** – թիւու, թիթուաշ, **դըյմա** – յոշուած, աղացած միս, **չիյ քէօֆթէ** – մսածաւար, **պիզելիա** – ոլոռն, **պիպեր** – կծու պղպեղ, **պուլդուր** – ձաւար, **զեմպերէք** – զսպանակ, **մաշա** – ամրակ, **մոզայիք** – խճանկար, **ռեժիմ** – սննդականոն (դիետա), **սարսուր** – բողոճ, **սապօթաժ** – խափանարարք, **սոֆա** – օթոց։

Սաղիմահայ գաղթօճախի լեզւում զանազանուում են նաեւ բառային միջոցներ, որոնք զգալիօրէն տարբերուում են Սփիւռքի այլ գաղթօճախներում գործածուող ձեւերից, թէեւ դրանց մի մասը հարազատ է նաեւ լիբանանեան եւ սիրիական համայնքին.

Ծամոն – ծամոց, **տուն տալ** – առիթ տալ, **եզական** – եզակի, **խոլերա** – քոլերա, **պոռչտուր** – բղաւոց, **հոսկէ-հոնկէ** – այստեղից-այնտեղից, **աժան** – էժան, **ակոշայ** –

ատամ, ահաւասիկ – ահա, աղէկ – լաւ, ընտիր, աղէկ-գէշ – լաւ-վատ, մի կերպ, աղուոր – գեղեցիկ, աղջիկութիւն – աղջիկ եղած ժամանակը՝ շրջանը, աղտոտ – կեղտոտ, աճապարել – շտապել, փութալ, աճապարանօր – աճապարանքով, ամալերջ – տարեվերջ, ամառնային – ամառային, աներ մայր – գոքանչ, անուշահոտ – օծանելիք, անուշնալ – քաղցրանալ, անցագիր – անձնագիր, անօթի – քաղցած, սոված, ապսպրանք – պատուէր, առաջուրնէ – նախապէս, սկըզբից, առժամեայ – ժամանակաւոր, առտու – առաւօտ, ասկէ – սրանից, ատակ – կարող, ընդունակ, ատեն-ատեն – երբեմն-երբեմն, ատենին/ատենօր – ժամանակին, արդեամբ – ծախսով, արեմուշ – աղջիկ սկառւտ, արժան – էժան, արկած – վթար, արձագանգ – արձագանք, արուեստական – արհեստական, առջի օր – երէկ չէ առաջին օրը, արտածել – արտահանել, արտօնել – թոյլատրել, բաթաթէս/գետնախնձոր – կարտոֆիլ, բանախօս – դասախօս, գայլիկ – պատանի սկառւտ, գանելիք – զգուելի, գէրնալ – գիրանալ, գիտնալիք – իմանալիք, գլխագիր – մեծատառ, գոլէն – քոլէջ, գործաւոր – աշխատատէր, գրոց-բրոց – գրել կարդալուն յատուկ, դա՛ – հեռու տարածութեան մասին խօսելիս (Դա՛ Ամերիկաները գացած էր), դարմանատուն – բուժարան, դգալ – գդալ, դեղահատ – դեղահաբ, դեղարան – դեղատուն, ելեկտրական – էլեկտրական, ելեմուտք – դրամական մուտք եւ ելք, ելեմուտքոյց – մուտքի եւ ելքի հաշուէցոյց, պիւտճէ, երկայն – երկար, երկնալ – պառկել, զարնել – հարուածել, ծեծել, զարնուած – ծեծուած, (խենթացած իմաստով), զորօրինակ – օրինակի համար, էրիկմարդ – հասուն աշր, ըլլալիք – լինելիք, ընկալեալ – ընդունուած, ըստ սովորութեան, ըսի-ըսաւ – բամբասանք, ժամարար – պատարագիչ քահանայ, ժամուց – պատարագիչ քահանային տրուող դրամական նուէր, իյնալ – ընկնել, իշտ – սաստելու բացականչութիւն, իրապաշտ – ռեալիստ, լեցուն – լիքը, լորճուկ – ողորմելի, լման – ամբողջ, լրիւ, լմնալ – վերջանալ, լմնցնել – վերջացնել, լոգարան – բաղնիք, լոգնալ – լողանալ, լուպիա – լոբի, խածնել – կծել, խենդենալիք բառը Սաղիմահայերը արտասանում են խենթանալիք՝ աննման, շտեսնուած իմաստով, խըմխըմ – ապուշ, յիմար, խնդիր – հարց, մտահոգութեան նիւթ, խնդուք – ծիծաղ, խոփ-խոշոր – շատ մեծ, խոշոր, խոֆած – ծեր, ծերացած, ծերութեան պատճառով ցնդած, խելքը թոցրած, կարգուիլ – ամուսնանալ, կերպաս – կտոր, գործուածք, ծափել – ծափալարել, կակաշ – կակաչ, կէտուակէս – կէսառկէս, կլլել – կուլ տալ, կռուագան – կռուարար, հագուածք – հագնելու ձեւ, հաճիս – խնդրեմ, խնդրում եմ իմաստներով, հեռաձայն – հեռախօս, հեռատեսիլ – հեռուստացոյց, հաւկիթ – ձու, յետայսու – սրանից յետոյ, հիմակուրնէ – այժմուանից, հիմակուհիմակ – առայժմ, հոգւոց – աղօթք ննջեցեալի հոգու համար, հոստեղ – այստեղ, հովահար – հովհար, հրամմէ՛ – հրաւերի, հիւրասիրելու արտայայտութիւն, ձուագեղ – ձուածեղ, ճանըմ – սիրելիս, հոգեակս, ճաշացոյցակ – կերակրացանկ (մենյու), ճերմակեղէն – սպիտակեղէն, փոխ-նորդ, ճեփ-ճերմակ – ամբողջովին սպիտակ, մասնաւոր – դիտմամբ, միտումնաւոր, մա-րելիք – ուշաթափութեան հասցնող երեւոյթ, մելան – թանաք, մեծաբան – մեծախօս, պարծենկոտ, մեղրալուսին – մեղրամիս, մեղք – ափսոս, մեղքնալ – մեղքանալ, խղճալ, մէյ մը – մի անգամ, մէկ էլ, մէկէն – իսկոյն, միմակ – մենակ, առանձին, միմտեր – բարձ, մորթ – մաշկ, կաշի, մսաշօթ – լահմաճուն, մտատիպար – մտովի կերտուած կատարելութեան տիպար, յայտագիր – ծրագիր, յաչս – աչքում, աչքին, յառաջադէմ – աշխատասէր, յա-րանուանութիւն – նոյն կրօնի մէջ այս կամ այն դաւանանքին հետեւողների խումբ՝ համայնք (յոյն, կաթողիկ, ասորի, ղպտի, հապէշ), յարկաբաժին – բնակարան, նանէ – անանուխ, դաղձ, նետուելիք – ոչ պիտանի, դէն գցելու, ներկայանալի – արտաքինով դրական տպաւորութիւն գործող, ներփակ – մի բանի մէջ դրուած եւ փակուած, ճիշ – գնահատական, թուանշան, նորէն – կրկին, նորից, շալկել – շալակել, շահաւոր – շահ, տոկոս բերող, շատոնց – վաղուց, շարժապատկեր – շարժանկար, կինոնկար, շիտակը – ճիշտն ասած, շիփ-շիտակ – ճիփ-ճիշտ, շնորհակալիք – շնորհակալութիւն, շփացած – երես առած, ողնայար – ողնաշար, ովկիանոս – օվկիանոս, որդնուտիլ – որդնել, որով –

որովհետեւ, **ուսողութիւն** – մաթեմատիկա, **ուրկէ** – այնտեղից, **ո՛ր տեղից**, **չէ՛նէ** – եթէ ոչ, **այլապէս**, **չըսեմ** – զարմանք, հիացմունք արտայայտող բացականչութիւն, **պահուրտիլ** – թաքնուել, **պաղառութիւն** – մրսածութիւն, **պաղարիւն** – սառնարուն, **պանակէ** – եպիսկոպոսի կրծքազարդ՝ Աստուածածնի եւ Յիսուսի պատկերով, **պանան** – բանան, **պանդոկ** – հիւրանոց, **պաս-պարապ** – անգործ, պարապ-սարապ, **պատասխանատու** – իրաւասու պաշտօնեայ, **պարապ** – դատարկ, **պզտիկութիւն** – մանկութիւն, **պէտքարան/արտաքնոց** – զուգարան, **պնակ** – ափսէ, **պոմպայ** – ռումբ, **պուպրիկ** – տիկնիկ, **պտրիկ** – փոքրիկ, **պստիկ**, **պտըտցնել** – զբօսանքի տանել, **պտոյտ** – զբօսանք, **սանդուխ** – աստիճան, **սանտր** – սանր, **սապէս** – այսպէս, **այս ձեւով**, **սափրիչ** – տղամարդու վարսաւիր, **սեպել** – հաշուի առնել, համարել, **սերտողութիւն** – սովորելը, **սեփ-սեւ** – չափազանց սեւ, **սմանդուկ** – կեղծաւոր, **սուղոց** – թանկարժէք, **ստեպղին** – գազար, **վախճալիք** – վախենալու առիթ, վախենալիք, **վարոց** – էժանագին, ցածր կարգի, բարոյագուրկ, **վարտիք/շապկընկեր** – ներքնաշորի տեսակի անուանում, **վերաքաղ** – անցած դասերի կրկնութիւն, **վիճակացոյց** – աշակերտի առաջադիմութեան թերթիկ, **տակալին** – դեռ, **տանիկ** – առհասարակ՝ իսլամը դաւանող անձ կամ ժողովուրդ, **տարուէտարի** – տարեցտարի, **տեսուչ** – տնօրէն, **տեսչարան** – տեսուչի առանձնասենեակ, **տղեկ** – փոքրիկ տղայ, **տողանցել** – շարքով անցնել, **փակիլ** – կպչել, **քալել** – քայլել, **քալեցնել** – քայլեցնել, **քակել** – քանդել, արձակել, **քաղաքավար** – բարեկիրթ, **քանակ/գծաքաշ** – քանոն, **քաններ** – քաղցկեղ, **քեռայր** – քրոջ ամուսին, **քէօֆթէ** – քիւֆթա, **քիչիկ** – մի քիչ, փոքր-ինչ, **քնանալ** – քնել, **քովիկ** – մօտ, կողքը, **օղակայան** – օդանաւակայան, **օթոպիս** – աւտոբուս, **ֆուլ** – բակլա:

Հայերէնի երկու տարբերակներում էլ լայն կիրառութիւն ունեն նաեւ դարձուածքները: Գրական երկու լեզուներում էլ կան ինչպէս նոյնութիւններ, այնպէս էլ տարբերութիւններ՝ կապուած շրջապատող միջավայրի, ապրելակերպի, հոգեկերտուածքի, օտար լեզուների ազդեցութեան հետ: Մեր կողմից ներկայացուած դարձուածքները համեմատաբար լայն տարածում ունեն Սաղիմահայ գաղութում, որոնք խօսքը դարձնելով պատկերաւոր՝ ստեղծում են հաղորդակցման իրավիճակի, միջավայրի որոշակի երանգաւորում, դրանցում արատայայտում է այդ լեզուն կրող ժողովրդի պատմութիւնը, աշխարհընկալումը: Ներկայացուած ցանկում ուշադրութիւն ենք դարձրել առաւել գործածական տարբերակների վրայ եւ դասաւորել ենք այբբենական կարգով:

Աչք բանալ-գոցելու ժամանակ չունենալ – խիստ զբաղուած լինել:

Աչքդ չելլէ – Չկուրանաս:

Աչքը գոց – Միամիտ, ոչ ճարպիկ:

Աչքի զարնել – Աչքի ընկնել:

Աչքէ անցընել – Քննել, թեթեւակի նայել:

Աչքէ ելլել – Աչքից ընկնել:

Առաջքը առնել – Կանխել:

Արեւ առնել – Տաքանալ:

Արիւնը գլուխը զարնել – Սաստիկ զայրանալ:

Բերանդ թքնեմ – Մտերմական յանդիմանութիւն:

Բերանը արել – Հայհոյել:

Բերնի ծամոց – Բամբասանքի նիւթ:

Գաղափար մը առնել – Կարծիք կազմել:

Գէշ աչքով նայիլ – Վատ տրամադրուած լինել:

Գլուխ ելլել – Գլուխ հանել:

Գլուխը դառնալ – Գլուխը պտտուել:

Գլուխը քերելու ժամանակ չգտնել – Ժամանակ բոլորովին չունենալ:

Գոյնը նետել – Դունատուել:

Գործ մը վրայէն նետել – Մերժել, հրաժարուել:

Գոց ընել – Անգիր անել:

Գրաւի գալ – Դրազ գալ:

Գրպանս գրպանդ է – Նոյն գրպանից ենք ծախսում, մեր մէջ «իմ» ու «քո» չկայ:

Դանակ զարնես՝ արիւն չի գար – Անտրամադիր լինել:

Դասարան կրկնել – Դասարանում մնալ:

Դեղ առնել – Դեղ գործածել՝ խմել:

Դժուարին գալ – Ազդուել, նեղուել:

Դրամ շինել – Փող վաստակել:

Եղունգը միսէն չի զատուիր – Հարազատները իրարից չեն բաժանւում:

Երուսաղէմի օդին, Եաֆայի ծովուն եւ արաբի խօսքին մի հաւատար – Վստահութիւն չունենալ:

Երուսաղէմ Քրիստոսը խաչեր են – Երուսաղէմում Քրիստոսին են խաչել քո պէս հասարակ մարդուն չպիտի՞ դատապարտեն:

Երեսը շնորհք կայ – Պարկեշտ՝ շնորհալի է:

Երեսին ըսել – Առանց թաքցնելու, համարձակ խօսել:

Երթալ-գալ – Գնալ-գալ:

Երկու ոտքը մէկ հողաթափի մէջ դնել – Շտապեցնել, պարտադրել:

Էշին եղնիկ ըսես, կը դառնայ քեզի էշ կ'ըսէ – Անարժէք մարդուն պէտք չէ արժէք տալ:

Ժամադրութիւն առնել – Ժամադրուել:

Ժամանակ անցընել – Ժամանակ անցկացնել, զուարճանալ:

Ի պահանջել յարկին – Յարկ եղած դէպքում:

Ի յարգանս – Ի նշան յարգանքի:

Ինձի խօսք չ'իյնար – Ինձ խօսք չի հասնում:

Ինձմէ աւելի տաքատ մաշեր ես – Ինձնից աւելի փորձ ունես:

Ի՞նչ ջուրի վրայ ես – Ի՞նչ վիճակում ես:

Իրար բռնել – Իրար նեցուկ լինել՝ սատարել:

Իրարու ձգել – Դժտեցնել:

Լեզուի վրայ մազ բուսնել – Յոգնել նոյնը կրկնելուց:

Լոգանք առնել – Լողանալ:

Լուրջի առնել – Լրջօրէն ընդունել:

Խելքը գլուխը – Խելացի, խելքը գլխին:

Խելքին պառկելիք – Տրամաբանական:

Խնդիր հանել – Պրոբլեմ ստեղծել:

Խնդիր մի՛ ըներ – Մի՛ առարկիր:

Խնդիր չէ – Կարելոր չէ:
 Խոնարհությունը ընել – Յարգանքով գլուխը խոնարհել:
 Խօսք առնել – Ելոյթ ունենալ, խօսել:
 Խօսքին ետևը կենալ – Խօսքը յարգել, խօսքի տէրը լինել:
 Ծախու առնել – Գնել:
 Ծեծ քաշել – Ծեծել:
 Կաղանդ պապա կամ Կաղանդ պապուկ – Ձմեռ պապ:
 Կատակը մէկդի – Կատակը մի կողմ:
 Կատակի զարնել – Կատակի տալ:
 Կարգ մը – Ինչ-որ, որոշ:
 Կարգի դնել – Կարգադրել, կարգաւորել:
 Կոնակ դարձնել – Խոյս տալ:
 Կոնակ կենալ – Օգնել, քաջալերել, թիկունք կանգնել:
 Կոնակը զօրաւոր է – Թիկունքը պաշտպանուած է:
 Կոնակէն խօսիլ – Ետեւից՝ հասցէին խօսել:
 Կօշիկէդ վեր մի՛ ելլեր – Չափդ իմացի՛ր:
 Հա՛ պատին խօսեր ես, հա՛ իրեն – Խօսքը տեղ չի հասնում:
 Համ առնել – Ախորժել:
 Հանգիստ ընել – Հանգստանալ, հանգչել:
 Հապը կլլել – Փորձանքի գալ, դժբախտութեան մատնուել:
 Հասակ նետել – Բոյ քաշել, բարձրահասակ դառնալ:
 Հակիրթի մէջ մազ փնտռել – Աւելորդ բծախնդրութիւն ցուցաբերել:
 Հոգ մի՛ ըներ – Մի՛ մտահոգուիր:
 Հոգ չէ – Ոչինչ, ինդիր չէ:
 Հրաման առնել – Թոյլտուութիւն ստանալ:
 Ձեռք թօթուել – Ձեռք սեղմել:
 Ձեռք ձգել – Ճարել:
 Ձեռք վերցնել – Ձեռք բարձրացնել, քուէարկել:
 Ձեռքը գոց – Ժլատ, գծծի:
 Ձեռքը չըլլալ – Ուժերից վեր լինել:
 Ձեռքէն գալ – Կարողանալ:
 Ձեր գիտնալիք բանն է – Ձեր իմանալիք բանն է:
 Ըխտին պարտք – Նուիրական պարտականութիւն:
 Մայրը լացընել – Վատութիւն անել, սպանել:
 Մատի փաթթոց ընել – Մատի փաթաթան դարձնել:
 Մեղքը առնել – Յանիրաւի մեղադրել:
 Մենք մեզի – Մենք մերոնցով:
 Մէկ ծակէ շնել – Սրտակից՝ մտերիմ ընկեր:
 Մէկ հատիկ – Միակ:
 Մէկը բռնէ միւսին զարկ – Երկուսն էլ իրար արժեն, մէկը միւսից լաւը չէ:

Մէկուն խողովակով – Մէկի միջոցով՝ շնորհիւ:

Մէկուն խօսք զարնել – Ակնարկել:

Կուտը հոս ուտել հակիրթը ուրիշ տեղ ածել – Օգտուել այստեղից, օգուտը ուրիշին տալ:

Մէյ մըն ալ – Մէկ էլ:

Մէկդի դնել – Առանձնացնել: Մի կողմ դնել, յետաձգել:

Մէջը մարդ ունենալ – Ներկայացուցիչ ունենալ:

Մէջէն ելլել – Յաջողութեամբ լուծել մի դժուարին հարց, միջից դուրս գալ:

Մէջի մարդ ըլլալ – Ներքին հարցերին տեղեակ լինել:

Մէջտեղ ելլել – Երեւան գալ, յայտնուել:

Մէջտեղ իյնալ – Փողոցներն ընկնել:

Մէջտեղ հանել – Գաղտնիքը հրապարակել:

Մէջտեղ ձգել – Լքել, առանձին թողնել:

Մէջտեղէն ելլել – Տեղը զիջել, հեռանալ, անհետանալ:

Մի ոմն – Մէկը:

Միով բանիւ – Մի խօսքով:

Միտքէն անցնել – Որեւէ բան իրականացնելու մասին մտածել, կարծել:

Մութը կոխել – Մթնել, մութն ընկնել:

Մութը մարել – Դժբախտացնել, ցաւ պատճառել:

Մօրը նայէ աղջիկը առ – Նախ մօր նկարագիրը տես, յետոյ աղջկայ հետ ամուսնացիր:

Մտիկ ընել – Ականջ դնել, լսել:

Նեղը ձգել – Դժուարին վիճակի մէջ դնել:

Նոր ի նորոյ – Ամբողջովին նոր:

Շատ տարիներու – Բազում, շատ տարիներով (շատ են ասում յատկապէս տօների ժամանակ):

Շաքար չեմ որ հալիւմ – Անձրեւից չեմ վախենում, թող թրջուեմ:

Շուկայ իջնել – Առեւտուր անելու գնալ:

Շունը յիշէ փայտը քաշէ – Երբ մէկի մասին խօսում են եւ յանկարծ յայտնւում է:

Ոգի ի բռն – Մահն աչքի առած, կեանքը վտանգելով:

Ոչ ես է – Չկայ, հանգուցեալ է:

Ոտքի տակի հողը չ'արժէ – Չափազանց անարժան լինել:

Որոշում առնել – Որոշում ընդունել, կայացնել:

Ուշ կամ կանուխ – Ուշ թէ շուտ:

Ուշ մնալ – Ուշանալ:

Ուշադրութիւն ընել – Ուշադրութիւն դարձնել:

Ուշքը վրան պահել – Աշալուրջ լինել, զգուշանալ:

Ուրկէ ուր – Որտեղից որտեղ:

Չափը անցընել – Սահմաններից դուրս գալ, չափը անցկացնել:

Չափը գիտնալ – Չափը իմանալ:

Չափէն առաւել – Պահանջուածից աւելի:

Պաղ ապուր – Անհամակրելի, սառնարիւն:
Պաղ առնել – Մրսել:
Պապա մարդ – Պատկառելի, յարգարժան մարդ:
Պարապ տեղը – Զուր:
Պարապ տակառ – Դատարկամիտ:
Պարապի գնաց – Փճացաւ, ձախողուեց:
Ջուր թափել – Վրան ջուր սրսկել, նաեւ միզել:
Սատանան ալ գլուխ չ'ելլեր – Ոչ ոք չի կարող բան հասկանալ:
Սեղան շտկել – Սեղան բացել:
Սիրտը առնել – Համոզել, ողորբել:
Սուտ խաբել – Ստել:
Վազ անցնիլ – Զեռք քաշել, հրաժարուել:
Վար առնել – Իջեցնել:
Վարձքդ կատար – Կատարած աշխատանքը թող գնահատելի լինի:
Վերէն վար լուալ – Խիստ քննադատել:
Վրան առնել – Իրեն վերագրել ասուածը:
Վրան սուղի նստիլ – Վրան թանկ նստել:
Վրաս գրէ – Անցած լինի, գրի՛ր սառույցին:
Վրայէն անցնիլ – Վերանայել, նորից կարդալ:
Տակէն ելլել – Տակից դուրս գալ:
Տեղւոյն վրայ – Անմիջապէս տեղում, տեղնուտեղը:
Յաւ ի սիրտ – Սրտի ցաւով, ցաւօք սրտի:
Փորը քշել – Փորհարինք՝ լուծ ունենալ, փորլուծութիւն:
Քաշուած միս – Աղացած միս:
Քեզի-ինծի չ'իյնար – Մեր գործը չէ:
Քեզի պէս խեղացիները պզտիկ գրպանէս կը հանեմ – Քեզ նմաններին բանի տեղ չեմ դնում:
Քիթդ-բերանդ մէկ կ'ընեմ – Կը ծեծեմ, կ'ապտակեմ:
Քիթին-բերնին ուտել – Ապտակ ստանալ:
Քիթէն-բերնէն գալ – Զղջալ գալու համար:
Քիչ ետք – Քիչ յետոյ, կարճ ժամանակ անց:
Քիչ մը – Մի քիչ, փոքր-ինչ:
Քով քովի – Իրար մօտ:
Օդ չկայ – Շնչել հնարաւոր չէ, օդը հեղձուցիչ է:
Օր մը չէ օր մը – Օրերից մի օր:
Օրերը քեզի կամ կեանքը քեզի – Հանգուցեալի չապրած օրերը հարազատներին մաղթել:¹⁶

Սաղիմահայ խօսակցական լեզուն բայի ներկայ ժամանակի վերջում երբեմն աւել-

¹⁶ Արեւմտահայերէն դարձուածքների օրինակները նշում եմ Պ. Պետրեանի «Հայերէնի դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի եւ Ռ. Սաֆապետոյեանի «Արեւմտահայերէնի դասագիրք»-ի օրինակների հետ:

լացնում է՝ «կոր» մասնիկը՝ «Կու գամ կոր» ձևով, որ անմիջական ներկայ է առաջ բերում, այսինքն՝ «Ճիշդ հիմա գալիս եմ, գալու ընթացքի մէջ եմ»:

«Զարաբաստիկ» այդ «կոր»-ի մասին Իւրա Աւետիսեանը գրում է. «Արեւմտահայ խօսակցական լեզուում շարունակական ներկայի իմաստը արտայայտւում է նաեւ կոր մասնիկով կը խօսիմ կոր, կ'երթամ կոր եւ այլն: Այս մասնիկը բարբառի միջոցով հայերէնին է անցել թուրքերէնից եւ հանդիպում է մի քանի փոքրասիական բարբառներում՝ Սեբաստիա, Զմիւռնիա, Ռոդոսթօ եւ այլն: Կոր մասնիկի վերաբերեալ Յովհ. Գազան-ճեանը գրում է. «Կոր մասնիկը, որ սահմանական ներկայի եւ անկատար ձեւերուն յետադասուելով բուն ներկայ շինելու կը ծառայէ, օրինակ՝ կ'երթամ կոր, կը խօսէի կոր եւ այլն, եւ երբեմն առանց կը-ի, երբ որ բառը բաղաձայնով կը սկսի, ինչպէս՝ գրեմ կոր, կարդայի կոր եւ այլն: Այս կոր-ը փոխառութիւն է թուրքերէնէ, որուն ներկայակերտ յոր-ին հայացած ձեւն է. Օրինակ՝ կիտի յոր = կ'երթայ կոր եւ այլն: Կոր-ի գործածումը աւելի յատուկ է խօսուած լեզուին եւ քիչ անգամ կը կիրարկուի գրական լեզուի մէջ: Բայց պէտք չէ խուսափիլ գործածելէ երբ իմաստի պայծառութեան հարկը կը պահանջէ որ գործածուի: Արդի գրական արեւմտահայերէնի գրաւոր տարբերակում այդ մասնիկը չի գործածուում: Հանդիպող օրինակները ոճական կիրառութիւններ են եւ գերազանցապէս հերոսների խօսքում են. Օրինակ՝ «Ինտոր կ'ըլլայ, որ չես ճանչնար կոր պզտիկ», «Զեմ յիշեր կոր, Կոստան, մեղքքիր ինծի, ես իմ «Հայր մեր»-ս չեմ յիշեր կոր» (Շ. Շահնուր)¹⁷:

Կոր-ի մասին միանգամայն այլ տեսակէտ ունի Պ. Պէտիրեանը. «Այս մասնիկի գործածութիւնը կատարեալ «վարակ» է արեւմտահայ խօսակցական լեզուի մէջ, եւ հնուց է գալիս: Կոր-ին շատ ենք հանդիպում Յակոբ Պարոնեանի գրուածքներում, որը սիրում է իր հերոսներին խօսեցնել պոլսահայ խօսակցական լեզուով:

– Վազ անցայ, պապա՛մ, հոգիս ցաւեցաւ, երեսս կրակի պէս կ'այրի կոր: – Բարկացած կ'երեւաք կոր, ատոր համար չեմ ուզեր պատասխանել...: – Ինչպէ՞ս քեւեմ, ճանրմ, նասըրներս կը ցաւին կոր...:

Նոյնիսկ մանրավէպ է յօրինուել մի ուսուցչի մասին, որը սիրում էր կրկնել.

– Սա կոր-ը մի՛ գործածէք, կ'ըսեմ կոր...

Արդ՝ ո՞րն է սխալի բուն պատճառը: Ինչո՞ւ այդ «շարաբաստիկ» կոր-ը դեռ չի մոռացուել:

Անգլերէնը ներկայի (*Present Tense*) երկու ձեւեր ունի, որոնք իրենց իմաստով յըստակ տարբերում են. դրա համար էլ *I go* եւ *I am going* ձեւերը նոյնը չեն: Այսպէս չէ սակայն հայերէնում: Շատերին թւում է թէ բայի մօտ կոր դնելով շարունակականի (*continuous*) իմաստ են հաղորդում բայի ներկայի եւ անցեալ անկատարի (*Past continuous*) ձեւերին: Իբր թէ կ'երթամ-ը *I go*-ն է, իսկ կ'երթամ կոր-ը՝ *I am going*-ը: Յատկապէս նրանք, որ քիչ թէ շատ ծանօթ են արեւելահայերէնին, կարծում են թէ գնում եմ-ը ճիշդ *I am going*-ն է, ինչո՞ւ հապա արեւմտահայերէնում էլ կոր-ը չասուի:

Իրողութիւնն այն է, շարունակում է յարգարժան փրֆեսորը, որ հայերէնը, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, շարունակականի քերականական կարգի մասնաւոր կամ յատուկ ձեւ չունի: Նրա ներկան թէ *Present Tense*-ի, թէ *Present continuous*-ի իմաստները կարող է արտայայտել: «Տուն կ'երթամ ու քիչ մը կը հանգչիմ» նախադասութիւնը թարգմանում է՝ *I go home and rest a bit*, իսկ «Հիմա տուն կ'երթամ», «Ահաւասիկ կը հանգչիմ»՝ *I am going home now, I am (just) having a rest*:

¹⁷ Իւրա Աւետիսեան, Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի ֆերականութիւն, Երեւան 2007, էջ 173:

Յուսով եմ, նշմարելի է, որ երբ ուզում էք յատկապես շեշտել շարունակականութիւնը, դարձեալ **կոր-ի** կարիքը չունէք. ուրիշ միջոցներ կան՝ **ճիշդ հիմա** հոնկէ կու գամ: **Ահաւասիկ** կը գրեմ: Նամակս վերջացնելու **վրայ եմ**: Այդ ժամերուն **սովորաբար** տունը կ'ըլլամ:

Այնպէս որ,- ասում է փրոֆեսորը,- ես էլ, մանրավէպի մէջ յիշատակուած ուսուցչի նման, նոյն կոչը պիտի ուղղեմ ձեզ, միայն թէ առանց վերջին բառի՝

– Սա **կոր-ը** մի՛ ըսէք, կ'ըսեմ ձեզի¹⁸:

Սաղիմահայրթեան բանաւոր եւ գրաւոր խօսքում արեւմտահայերէնի **ե եւ ի ծոր-** դութեան պատկանող մի քանի բայեր յաճախ գործածւում են որպէս **ա լծորդութեան** բայեր՝

ելլել (ոչ թէ ելլալ) – կ'ելլեմ, կ'ելլենք, կ'ելլէի...

մտնել (ոչ թէ մտնալ) – կը մտնեմ, կը մտնէիք, պիտի մտնէի...

տեսնել (ոչ թէ տեսնալ) – կը տեսնեմ, կը տեսնէինք, պիտի տեսնէի...

իջնել (ոչ թէ իջնալ) – կ'իջնեմ, կ'իջնէինք, պիտի իջնէի...

երեւիլ (ոչ թէ երեւալ, բայց երեւնալ) – կ'երեւիմ, կ'երեւէինք, պիտի երեւէի, պիտի երեւինք:

թուիլ (ոչ թէ թուալ) – կը թուիմ, կը թուինք, պիտի թուէի, պիտի թուի...

ժպտիլ (ոչ թէ ժպտալ) – կը ժպտիմ, կը ժպտէինք, պիտի ժպտէի, պիտի ժպտի¹⁹:

Ընդհանրապէս ներգոյական հոլովի իմաստն արտայայտւում է երեք եղանակով (սեռական հոլովով եւ մէջ կապով, հայցականի ձեւով, տրականով): Սաղիմահայերի խօսքում ներգոյականի իմաստն արտայայտելու եւս մէկ եղանակ կայ՝ բացառական հոլովով եւ ներս կապով (Ժառանգաւորաց վարժարանէն ներս տեղի ունեցաւ ամսավերջեան հանդէս): Հետաքրքրական է, որ եթէ նախկինում (մօտ յիսուն տարի առաջ) իրար յաջորդող երկու սեռականների յօդ ստանալը սովորական էր (անցեալին մշուշին մէջէն), ապա ներկայումս առաջին սեռականի առանց յօդի կիրառութիւնն է աւելի սովորական (հայր սուրբի դէմքին վրայ): Սաղիմահայ խօսքում նկատելի է նաեւ հոլովական զուգաձեւութիւնների առատութիւնը (հոգիի – հոգւոյն, պատիւի – պատուի – պատուոյ, տարիի – տարւոյն – տարուան, շունի – շան, ծովի – ծովու, քաջութիւնով – քաջութեամբ, հօրմով – հայրով, սուգի – սգոյ, անունի – անուան եւ այլն):

Շօշափելի է նաեւ անգլերէնի թողած ազդեցութիւնը շեշտի եւ հնչերանգի վրայ: Շեշտի նախավերջին վանկ տեղափոխելը համապատասխան արտաբերական լարուածութեամբ եւ հնչիւնական թուլացմամբ անգլա-ամերիկեան ոլորտին բնորոշ առանձնայատկութիւն է, որ Սաղիմահայերը որդեգրել են՝ Սարգիսեան, Զամբաճեան, Մանուկեան, Զաքարեան: Արեւմտահայ գրական լեզուին ոչ բնորոշ նման շեշտադրութիւնը ունի ոչ թէ սոսկ սուբյեկտիվ երանգաւորում, այլ տուեալ լեզուաոլորտը բնութագրող յատկանիշի արժէք: Խօսելով անգլերէնի ազդեցութեան մասին պէտք է յիշենք նաեւ ժամանակակից գիտատեխնիկական իրադրութիւն արտացոլող օտարաբանութիւնները՝ **աքսիդան, թրաֆիկ, բարքինգ, օթո, սքէ, քնսըլ, օնլայն, թաբլեթ** եւ այլն:

Այստեղ մեզ մնում է անդրադառնալ նաեւ **իւ** գրութեան արտասանութեանը մի շարք դիրքերում:

¹⁸ **Պ. Պէտրեան**, Եկե՛ք ճիշդ խօսիմք ու գրեմք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, 1993, էջ 117-118:

¹⁹ Տե՛ս **Իւրա Աւետիսեան**, Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բերականութիւն, Երեւան 2007, էջ 126:

Ա. Այտընեանը արեւմտահայ աշխարհաբարի նախաբաղաձայնական դիրքի իւ կապակցութեանը իմ հնչիւնական արժէք է վերագրում. «Ի ձայնաւորը նախընթաց ինիով մը (իւ) իու կը հնչէ՝ քանի որ հետը բաղաձայն մ'ունի. այսպէս, **իւր, իւրաքանչիւր, ճիւղ, էութիւն, հարիւր, հիւսել**»²⁰; Ի հարկէ, արեւմտահայերէնի բազմաթիւ դասագրքերում **իւ (իու)** արտաբերութիւնը որպէս հաստատուն իրողութիւն է ներկայացուել (ինչպէս օրինակ՝ Աբրահամեան Ս., Բերդեան Բ., Քէօսեան Վ., Հայերէն լեզուի դասագիրք Երեւան, 1966, Դորա Սաքայեան, *Western Armenian for English-speaking World, Mountreal, 2000*, էջ 124), սակայն աւանդաբար այն շարունակուել է դիտուել որոշ վերապահութեամբ **ու**-ի տարբերակ կամ երկբարբառ²¹:

Մեր դիտարկումով նման մօտեցումը պայմանաւորուած է առանձին անհատների օտարախօս արտաբերութեամբ, չունի համակարգային բնոյթ եւ լինելով դիրքային ու փոփոխական, այնուամենայնիւ, չի դիտարկուում որպէս հնչոյթային հակադրութիւն, չունի ընդհանրական բնոյթ:

Փորձառական ուսումնասիրութիւնը (Սաղիմահայ լեզուակիրների արտասանական վերլուծութիւնը՝ որոնց զգալի մասը ներգաղթել են Լիբանանից եւ Սիրիայից) թոյլ է տալիս փաստել, որ յատկապէս նրանց խօսքում **իու** կապակցութիւնն ունի իր ֆիզիքական արտայայտութիւնը, որտեղ քմային յատկանիշը չի տարածուում ձայնաւորի ողջ սպեկտրի վրայ, այլ ունի իր ինքնուրոյն պատկերը:

Յայտնի է, որ գրական արեւմտահայերէնում օտար բառերի քմային «**յ**» եւ «**ծ**» ձայնաւորները տառադարձուում են **իւ**-ի եւ **էօ**-ի միջոցով²²: Ա. Այտընեանը այդ մասին գրում է. «Ասկէ զատ՝ նոր յարմարագրութիւնն օտար բառերու ճշգրտոյն հնչմանը համար ընդունուած է **էօ** եւ **իւ** երկբարբառները, որ հայերէնէ օտար ձայներ են»²³: Արդ, քանի որ Ա. Այտընեանը քմային «**յ**» եւ «**ծ**» ձայնաւորները հայերէնին խորթ է համարում, ապա դրանից թերեւս կարելի է հետեւեցնել, որ հին հայերէնից ժառանգուած բառերի **իւ** կապակցութիւնն այդ ժամանակ (19-րդ դ. 50-60-ական թթ.) դեռեւս քմային «**յ**» ձայնաւորի արտասանութիւն չի ունեցել, այսինքն՝ **իու** բարձրացող երկբարբառ > **յ** քմային ձայնաւոր հնչիւնափոխութիւնն աւելի ուշ է տեղի ունեցել²⁴:

Այս ամէնի հետեւանքով արեւմտահայերէնը այսօր փոխառեալ բառերի ու յատուկ անունների գրութեան հարցում կանգնում է երկընտրանքի առջեւ. ինչի՞ն տալ առաջնութիւնը՝ գրութեանը, թէ՞ արտասանութեանը: Արտասանութեանը առաւելութիւն տալու դէպքում խախտուում է գրութիւնը, աղճատուում է բառապատկերը, իսկ հակառակ դէպքում տուժում է արտասանութիւնը:

Սաղիմահայ գաղութի լեզուական արտասանուածքի, խօսուածքի ձեւաւորման վրայ իրենց ազդեցութիւնն են թողել արտաքին գործօնները այդ թւում արաբական միջավայրը, որի արդիւնքում այսօր **իւ** երկբարբառը արտասանուում է քմային «**յ**»:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Երուսաղէմի հայութեան խօսուածքը էապէս չի տարբերուում լիբանանեանից ու սիրականից, քանի որ բնակչութեան զգալի մասը այդ

²⁰ Ա. Այտընեան, Քննական ֆերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 371:

²¹ Ռ. Սաքայեան, Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան, 2006, էջ 14:

²² Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քէօսեան, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1966, էջ 42:

²³ Ա. Այտընեան, Քննական ֆերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 346:

²⁴ Ս. Աւետիսեան, Գրական արեւմտահայերէնում հին հայերէնի իւ երկբարբառի արտացոլման հարցի շուրջ, Տէս Հայերէնագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, Զեկոյցների ժողովածոյ, Երեւան, 2015, էջ 24:

երկրներից եկածներ են: Խօսակցական լեզուում կան շատ փոխառություններ ինչպես ուղղակիօրէն թուրքերէնից, արաբերէնից, եբրայերէնից, այնպէս էլ միջնորդաբար այլ լեզուներից անցած: Շօշափելի է նաեւ անգլերէնի ազդեցութիւնը շեշտի եւ հնչերանգի վրայ (շեշտի նախավերջին վանկ տեղափոխելը): Խօսակցական լեզուում բայի ներկայ ժամանակի վերջում շատ յաճախ աւելացնում են «կոր» մասնիկը, իսկ իւր երկբարբառը արաբական միջավայրի ազդեցութեան արդիւնքում արտասանում են քմային «Ա»:

Այս տեսակ ուսումնասիրութիւնները զուտ լեզուաբանական հետաքրքրութիւն ներկայացնելուց բացի կարող են վեր հանել նաեւ արեւմտահայերէնի զարգացման միտումները տարբեր միջավայրերում, նախանշել գրական արեւմտահայերէնի կանոնարկման հնարաւորութիւններն ու եղանակները, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի՝ իբրեւ մէկ լեզուական ամբողջութեան միասնական զարգացման ուղիներն ու հեռանկարները:

Գրականութեան ցանկ

1. **Իւրա Անտիսեան**, Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւն, Երեւան, 2007:
2. **Իւրա Անտիսեան**, Տեղաշարժեր արդի գրական հայերէնում, Երեւան, 2011:
3. **Իւրա Անտիսեան**, Լեզուական նորմ, նորմաւորման շափանիշները, Բանբեր Երեւանի Համալսարանի, Հայագիտութիւն, 2014, № 2:
4. **Յ. Կաթ. Դրասխանակերտցի**, Հայոց Պատմութիւն, Աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թօսունեանի, Երեւան, 1996:
5. **Մ. Եսս. Աղաւունի**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ, Երուսաղէմ, 1931:
6. **Կ. Վրդ. Բաղդասարեան**, Երուսաղէմի Հայկական թաղամասի գաղտնիքները, Մաս Ա., Երեւան, 2019:
7. **Անատաս Վրդ. Յերայոսեցի**, Վասն վանօրէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, Առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Զօպանեանի, «Մատենագիրք հայոց», հ. Ե., է. դար, Անթիլիաս, 2005:
8. **Սիմէոն Դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք: Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Վիեննա, 1936:
9. **Պ. Պէտիրեան**, Եկէք ճիշդ խօսինք ու գրենք, Օժանդակ ձեռնարկ, Պոստոն, 1993:
10. **Ա. Այտընեան**, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987:
11. **Ռ. Սաքապետոյեան**, Արեւմտահայերէնի դասագիրք, Երեւան, 2006:
12. **Ռ. Սաքապետոյեան**, Լեզուական նորմը եւ լեզուի ներքին տեղաշարժերը, Հայերէնագիտութեան հիմնահարցեր եւ զարգացման հեռանկարներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածոյ, Երեւան, 2015, էջ 212:
13. **Ս. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քէօսեան**, Հայերէն լեզուի դասագիրք, Երեւան, 1966:
14. **Վ. Աճեմեան**, Գրական արեւմտահայերէնի ձեւաւորումը, Երեւան, 1971:
15. **Տ. Շահրազեան**, Արեւմտահայ աշխարհաբարի առաջացումը, Երեւան, 1963:

16. **Գ. Սեւակ**, Ժամանակակից հայոց լեզուի դասընթաց, Երեւան, 1955:
17. **Տ. Ա. Յովհաննէսեանց**, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հատոր Ա եւ Բ, Երուսաղէմ, 1890:
18. **Տ. Սաւաքանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, հատոր 1-2, Երուսաղէմ, 1931:
19. **Հ. Մամուրի**, Հայերը Երուսաղէմի մէջ ամենահին ժամանակներից մինչեւ մեր օրերը [Ա.տ.], 1963:
20. **Գ. Զահուկեան**, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը, Երեւան, 1969:
21. **Հ. Աճառեան**, Էմինեան Ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911:
22. **Հ. Աճառեան**, Հայոց լեզուի պատմութիւն, Մաս II, Երեւան, 1951:
23. **Հ. Աճառեան**, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, Երեւան, 1955:
24. **Մ. Աբեղեան**, Հայոց լեզուի տեսութիւն, Երեւան, 1965:
25. **Անդրանիկ Վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:
26. **Պ. Պէտրեան**, Հայերէնի դարձուածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ, Երեւան, 2011:
27. **Մ. Յարութիւնեանց**, Բացատրական բառգիրք - Օտարազգի բառերի եւ օտարագիր բառերի ու դարձուածքների, Ալեքսանդրապոլ, 1912:
28. **Արեւմտահայերէնի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում**, Երեւան, 2012:
29. **Պ. Զօպանեան**, Անաստաս Վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի ժամանակի հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդէս, 2001, № 1:
30. **Ս. Աւետիսեան**, Գրական արեւմտահայերէնում հին հայերէնի իւ երկբարբառի արտացոլման հարցի շուրջ, Հայերէնագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, Զեկոյցների ժողովածոյ, Երեւան, 2015:

Համացանցային ռեսուրսներ

1. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան - https://hy.wikipedia.org/wiki/Հայերը_Իսրայելում:
2. Այո՞ո՞ո՞ Հայ ես... Բայց Օտաաա՛ր ես... - <https://www.youtube.com/watch?v=miScOi3b2vo>:
3. Քաղաքացիները. Ծանօթանանք Հայ Երուսաղէմին - 7 - https://youtu.be/iaBMk1RTS_w: